RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2021 թ.

Բովանդակություն

- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 6
- Վարկային ներդրումներ 8
- Ընդհանուր պարտավորություններ 10
- Ավանդներ և պարտատոմսեր 11
- Ընդհանուր կապիտալ 13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2021 թ. Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթ, ROAE, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Զուտ շահույթ

- 2021 թվականի ընթացքում Հայաստանում գործող բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է **87 մլրդ ՀՀ դրամ,** ինչը **33 մլրդ ՀՀ դրամով** կամ **62%-ով** ավել է քան 2020 թվականի ընթացքում գրանցած արդյունքը:
- 2021 թվականի ընթացքում, վարկային կորուստների պահուստին կատարված մասհանումները **56 մլրդ ՀՀ** դրամով ավելի քիչ են կատարվել քան 2020 թվականի ընթացքում:
- 2021 թվականին երեք բանկեր (Ամերիաբանկ, Արդշինբանկ եւ ԱԿԲԱ ԲԱՆԿ) արձանագրել են Հայաստանի բանկային համակարգի զուտ շահույթի 50%-ը:



ROAE

- Բանկային համակարգի ROAE ցուցանիշը 2021 թվականի ընթացքում աճել է 51%-ով (**6.3%-**ից՝ **9.5%)**:
- Բանկային համակարգի սեփական կապիտալը 2021 թվականի ընթացքում աճել է 8.8%-ով և 31.12.2021թ. դրությամբ կազմել **958 մլրդ ՀՀ դրամ**:
- 2021 թվականին Հայաստանի բոլոր բանկերն ունեցել են դրական ROAE ցուցանիշ:

Զուտ շահույթ/ընդհանուր կապիտալ միջին հարաբերակցության (ROAE) համեմատական ըստ բանկերի 2020 - 2021 թթ.



Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2021թ. ընթացքում աճել են **493 մլրդ ՀՀ դրամով,** կամ **7.5%:**

- Առ 31.12.2021, ընդհանուր ակտիվները կազմել են **7.080 մլրդ ՀՀ դրամ**:



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Ամերիաբանկ, Արդշինբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Ինեկոբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **56%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Ամերիաբանկ, Արդշինբանկ և ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **42.3%:**
- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **15.5%:**

Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 31.12.21



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2021թ. ընթացքում մնացել է գրեթե անփոփոխ:
- Առ 31.12.2021 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **4.027 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **57%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:

Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան - 2021 թ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր վարկային պորտֆել

- Ամենախոշոր **5** բանկերի *(Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, Արդշինբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, Կոնվերս Բանկ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **61%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ և Արդշինբանկ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **46%:**
- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **16.7%:**

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 31.12.21



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2021թ. ընթացքում աճել են **415 մլրդ ՀՀ դրամով,** կամ **7.3%:**

- Առ 31.12.2021, ընդհանուր պարտավորությունները կազմել են **6.122 մլրդ ՀՀ:**

Բանկերի ընդհանուր պարտավորությունները - 31.12.21 և 31.12.20 (մլն ՀՀ դրամ)



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2021թ. ընթացքում աճել են **298 մլրդ ՀՀ դրամով,** կամ **8.4%**:
- Առ 31.12.2021, **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **3.869 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **63%:**

Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ
- 31.12.21 և 31.12.20 (մլն ՀՀ դրամ)



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը աճել է 2021թ. **14.6 մլրդ ՀՀ դրամով,** կամ **3.4**%-ով և կազմում է **446 մլրդ ՀՀ դրամ**:
- 2021թ. ընթացքում, Էվոկաբանկը առաջին անգամ սկսեց պարտամոմսերի թողարկում:
- **17** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **12-ը**:

Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 31.12.21 և 31.12.20
(մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- 2021թ. ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **78 մլրդ ՀՀ դրամով**, կամ **9%** ու կազմել **958 մլրդ ՀՀ դրամ**:
- Կանոնադրական կապիտալը (ներառյալ էմիսիոն եկամուտը) աճել է **29 մլրդ ՀՀ դրամով** *(ԱԿԲԱ Բանկ – 27.5 մլրդ ՀՀ դրամ, հիմնականում կուտակված շահույթի հաշվին, Յունիբանկ – 1.1 մլրդ ՀՀ դրամ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ – 261.4 մլն ՀՀ դրամ և Ամերիաբանկ – 108.4 մլն ՀՀ դրամ)*:
- Վերագնահատման պահուստները նվազել են **19.1 մլրդ ՀՀ դրամ**, կամ **43%**:

Բանկերի ընդհանուր կապիտալի համեմատություն - 31.12.21 և 31.12.20 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- Առ 31.12.2021թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **59%**-ը և հավասար է **563 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 31.12.2021թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **38**%-ը և հավասար է **370** մլրդ ՀՀ դրամ:
- Առ 31.12.2021թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **3%**-ը և հավասար են **25.6 մլրդ ՀՀ դրամ**:

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 31.12.2021



Կուտակված շահույթ (վնաս)

- 2021թ. ընթացքում Հայաստանի բանկային համակարգի կուտակված շահույթը/վնասը (ներառյալ գլխավոր պահուստը) աճել է **68 մլրդ ՀՀ դրամով**, կամ **23%,** կազմելով **370 մլրդ ՀՀ դրամ**:
- 2021թ. ԱԿԲԱ բանկ-ը կուտակված շահույթի հաշվին ավելացրել է կանոնադրական կապիտալը շուրջ **20 մլրդ ՀՀ դրամով**:
- Շահաբաժին (դիվիդենտ) հայտարարագրել են վեց բանկ՝ ընդհանուր գումարով **12.4 մլրդ ՀՀ դրամ** (Ինեկոբանկ – *7.5 մլրդ ՀՀ դրամ*, ԱԿԲԱ Բանկ – *2.5 մլրդ ՀՀ դրամ*, ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ – *1.27 մլրդ ՀՀ դրամ, Էվոկաբանկ – 571 մլն ՀՀ դրամ, Յունիբանկ – 412 մլն ՀՀ դրամ* և Արդշինբանկ – *170 մլն ՀՀ դրամ*):

Կուտակված շահույթ (վնաս), ներ. գլխավոր պահուստ - *31.12.21 և 31.12.20 (մլն ՀՀ դրամ)*



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am